ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՆԵՔՍԱ ՍՊԸ-ն ՇՄԱՆՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/9 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
4	4 30239110/1 տպիչ սարք, բազմաֆունկցիոնալ, A4, 18 էջ/րոպե արագության Սարքի տեսակը՝ սև-սպիտակ լազերային բազմաֆունկցիոնալ սարք՝ տպիչի, պատճենահանման և գունավոր սկանավորման գործառույթներով: Տպման տեխնոլոգիան՝ լազերային: Տպման ձևաչափը՝ A4: Տպման արագությունը՝ առնվազն 18 էջ/րոպե՝ A4 ձևաչափով: Տպման թույլատրելիությունը՝ առնվազն 600 × 600 dpi, պատկերի բարելավման տեխնոլոգիայով՝ համարժեք առնվազն 1200 × 600 dpi որակ: Պատճենահանման արագությունը՝ առնվազն 18 էջ/րոպե՝ A4 ձևաչափով: Պատճենահանման թույլատրելիությունը՝ առնվազն 600 × 600 dpi: Պատճենահանման խոշորացման և փոքրացման հնարավորությունը՝ նվազագույնը 50%, առավելագույնը՝ 200%: Սկաների տեսակը՝ հարթակային, գունավոր, CIS տեխնոլոգիայով: Սկանավորման օպտիկական թույլատրելիությունը՝ առնվազն 600 × 600 dpi: Սկանավորման բարելավված թույլատրելիությունը՝ առնվազն 9600 × 9600 dpi: Գունային խորությունը՝ առնվազն 24 բիթ: Մոխրագույնի աստիճանները՝ առնվազն 256: Թղթի մուտքային տարողությունը (Input tray)՝ առնվազն 150 թերթ: Թղթի ելքային տարողությունը (Output tray)՝ առնվազն 100 թերթ: Թղթի խտությունը՝ նվազագույնը 60 գ/մ², առավելագույնը՝ 163 գ/մ²: Աջակցվող թղթի ձևաչափերը՝ առնվազն A4, A5, B5, Letter, Legal, Executive և Statement: Առաջին էջի դուրս գալու ժամանակը՝ առավելագույնը 8 վայրկյան՝ A4 ձևաչափով: Առաջին պատճենի ստացման ժամանակը՝ առավելագույնը 12 վայրկյան: Միացման ինտերֆեյսը՝ առնվազն USB 2.0 Hi-Speed: Համատեղելիությունը՝ Microsoft Windows օպերացիոն համակարգերի հետ՝ առնվազն մեկ աջակցվող տարբերակով: Ամսական առավելագույն ծանրաբեռնվածությունը՝ առնվազն 8 000 էջ: Առաջարկվող ամսական տպաքանակը՝

	առնվազն 250 էջ։ Ներկառուցված հիշողությունը՝ առնվազն 64 ՄԲ։ Էլեկտրասնուցումը՝ 220–240 Վ, 50/60 Հց։ Տաքացման ժամանակը՝ առավելագույնը 10 վայրկյան։ Քարթրիջի համակարգը՝ մեկ քարթրիջով տպման համակարգ։ ։ Քարթրիջի հայտարարված ռեսուրսը՝ առնվազն 1 600 էջ՝ ստանդարտ փորձարկման պայմաններում։ Լրակազմի և լրացուցիչ պայմանների պահանջներ 1. Անհրաժեշտ լրակազմ՝ • Էլեկտրասնուցման լար՝ առնվազն 1 հատ։ • USB միացման լար՝ առնվազն 1 հատ, առնվազն 1.5 մ երկարությամբ։ • Ծրագրային ապահովման (Driver) կրիչ կամ արտադրողի պաշտոնական կայքից ներբեռնման հնարավորություն։ • Քարթրիջ՝ առնվազն 1 հատ՝ սարքի հետ լիարժեք համատեղելի։ 2. Ապրանքի վիճակն ու փաթեթավորումը՝ Ապրանքը պետք է լինի գործարանային հավաքմամբ (factory assembled), գործարանային փաթեթավորմամբ, նոր և չօգտագործված։ 3. Երաշխիքային ժամկետը՝ Առնվազն 365 օր՝ հաշված Գնորդի կողմից ապրանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից։ Երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները Վաճառողը պարտավոր է շտկել Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում՝ անհրաժեշտ դետալների փոխարինմամբ կամ ապրանքը նորով փոխարինելով։ 4. Տեղափոխում և բեռնաթափում՝ Ապրանքի տեղափոխումն ու բեռնաթափումն իրականացվում են Վաճառողի կողմից՝ իր միջոցների հաշվին, ներառյալ երաշխիքային սպասարկման համար անհրաժեշտ տեղափոխումները։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО «НЕКСА» в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՇՄԱՆՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/9 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
4	